ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 239- Ա 13 ապրիլի 2022 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 1-Ի N 222-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 3-րդ մասի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 14-րդ հոդվածի դրույթներով ու հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2022 թվականի ապրիլի 1-ի N 221-Ա որոշումը և «Վարդենիսի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 2022 թվականի ապրիլի 4-ի պետական գրանցումը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2022 թվականի ապրիլի 1-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Վարդենիսի պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերությունը Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Վարդենիսի հիվանդանոց» պետական փակ բաժնետիրական ընկերությանը միացման ձևով վերակազմակերպելու պատճառով հանձնման-ընդունման հանձնաժողով ստեղծելու մասին» N 222-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումն ու փոփոխությունները՝

1) որոշման և որոշման հավելվածի վերնագրերի, որոշման 1-ին կետի «վերակազմակերպելու» բառից հետո լրացնել «և վերակազմակերպումից հետո «Վարդենիսի հիվանդանոց» պետական փակ բաժնետիրական ընկերությունը «Վարդենիսի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն վերանվանելու» բառերը,

2) որոշման 1-ին կետի «հաշվարկները» բառից հետո «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Վարդենիսի հիվանդանոց» պետական փակ բաժնետիրական ընկերությանը» բառերը փոխարինել «Վարդենիսի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը» բառերով,

3) հավելվածի «Շահեն Շահինյան -ընդունող, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Վարդենիսի հիվանդանոց» պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար» բառերը փոխարինել «Շահեն Շահինյան -ընդունող, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Վարդենիսի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար» բառերով, «Հայկ Սահակյան- ընդունող, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Վարդենիսի հիվանդանոց» պետական փակ բաժնետիրական ընկերության գլխավոր հաշվապահ» բառերը փոխարինել «Հայկ Սահակյան- ընդունող, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Վարդենիսի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր հաշվապահ» բառերով:

13.04.2022

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
Ք.Գավառ